



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի գործակալություններն ու ծրագրերը կազմակերպում են Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված մամուլի ասուլիս և «Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի եզրափակիչ կոնֆերանս



Ք. Երևան, 10.12.2008թ. Այսօր «Կոնգրես» հյուրանոցի դահլիճում կայացավ Մարդու իրավունքների միջազգային օրվան նվիրված մամուլի ասուլիսը և Հայաստանում «Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի եզրափակիչ կոնֆերանսը:

Միջոցառումը սկսվեց Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Տկն. Կոնսուելո Վիդալի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Պրն. Արմեն Հարությունյանի մամուլի ասուլիսով, որի ավարտին կայացան պլենար միստ-քննարկումներ՝ նվիրված ներընտանեկան բռնության, թրաֆիքինգի,

քաղաքական և քաղաքացիական, ինչպես նաև տնտեսական իրավունքների տեսանկյունից Կանանց մարդու իրավունքների ոտնահարմանը:

Կոնֆերանսը ամփոփեց Հայաստանում «Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավի շրջանակներում կազմակերպված միջոցառումների շարքը:

Քարոզարշավի շրջանակներում իրականացվել են տարատեսակ միջոցառումներ, այդ թվում՝ մամուլի ասուլիսներ, հասարակական լուսմներ, սոցիալական տեսահոլովակների և ֆիլմերի ցուցադրում, հանդիպումներ ու սեմինարներ ՀԿ-ների, համայնքախոս կազմակերպությունների ուսանողների և տեղական իշխանությունների ներկայացուցիչների հետ Երևանում ու մարզերում: Միջոցառումների ուշադրության կենտրոնում էին կանանց նկատմամբ կիրառվող բռնության տարբեր ասպեկտները, ներընտանեկան բռնությունը և թրաֆիքինգը:

Քարոզարշավը կազմակերպվել էր ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP), ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (UNFPA), Միգրացիայի միջազգային կազմակերպության (IOM) և ՄԻԱԿ/ՁԻԱՀ-ի ՄԱԿ-ի միացյալ ծրագրի (UNAIDS) համատեղ ջանքերով: «Ընդդեմ Չենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» քարոզարշավին օժանդակեցին նաև ՀՀ կառավարությունը, հայաստանի քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպություններ ու ՋԼՄ-ներ:

Կոնֆերանսի մասնակիցները մշակեցին և ստորագրեցին «Ընդդեմ Չենդերային բռնության» համատեղ հռչակագիրը:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Ջինա Սարգիզովային՝ sargizova@unfpa.org, հեռախոս՝ 374 10 512038 կամ Անուշ Ավանեսյանին՝ anoush.avanesyan@undp.org, հեռախոս՝ 374 10 566073, լրացուցիչ 210:

* * *